

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

____.____. 2018 թվականի

N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018/2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ
ԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ՝

1) Պաշտպանության նախարարության համար նախատեսված ինտերնատուրայի ընդունելության 28 տեղ,

2) կլինիկական օրդինատուրայի ընդունելության 95 տեղ, այդ թվում՝ Առողջապահության նախարարության համար նախատեսված 49 նպատակային տեղ ըստ մասնագիտությունների՝ համաձայն N 1 հավելվածի, Կրթության և գիտության նախարարության համար նախատեսված 18 տեղ ըստ մասնագիտությունների՝ համաձայն N 2 հավելվածի, Արցախի Հանրապետության համար նախատեսված 17 տեղ, Պաշտպանության նախարարության համար նախատեսված 11 տեղ:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա կլինիկական օրդինատուրայի առկա ուսուցմամբ թափուր մնացած տեղերը վերաբաշխում է Կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայն Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և Առողջապահության նախարարության ներկայացրած լրացուցիչ հայտերի՝ իրենց տրամադրված տեղերի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ՝ Առողջապահության նախարարության համար նախատեսված կլինիկական օրդինատուրայի նպատակային ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Քանակ
Լաբորատոր ախտորոշում	2
Ընդհանուր վիրաբուժություն	2
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	7
Ակնաբանություն	2
Մանկաբարձություն և գինեկոլոգիա	1
Քիթ-կոկորդ-ականջաբանություն /օտորինոլարինգոլոգիա/	1
Նյարդաբանություն	2
Պաթանատոմիա և կլինիկական մորֆոլոգիա	1
Ընտանեկան բժշկություն	5
Պալարախտաբանություն /ֆտիզիատրիա/	1
Դատա-բժշկական փորձաքննություն	1
Հոգեբուժություն	2
Ընդհանուր մանկաբուժություն	3
Նեոնատոլոգիա	1
Ներքին բժշկություն	3
Ինֆեկցիոն հիվանդություններ	1
Ճառագայթային ախտորոշում	1
Սրտաբանություն/կարդիոլոգիա/	3
Ներզատաբանություն /էնդոկրինոլոգիա/	1
Շտապբուժօգնություն	3
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	2
Արյունաբանություն /հեմատոլոգիա/	1
Վնասվածքաբանություն և օրթոպեդիա	1
Մեղրիի հատկացվող տեղեր	2
ԸՆԴԱՄԵՆԸ	49

Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ՝ Կրթության և գիտության նախարարության համար նախատեսված կլինիկական օրդինատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	օրդինատուրա
Պաթանատոմիա և կլինիկական մորֆոլոգիա	1
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	3
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	1
Նեոնատոլոգիա	1
Երիկամաբանություն /նեֆրոլոգիա/	1
Մանկաբարձություն և գինեկոլոգիա	1
Ռեմատոլոգիա	1
Հոգեբուժություն	1
Թոքաբանություն /պուլմոնոլոգիա/	1
Մանկական ինֆեկցիոն հիվանդություններ	1
Ուռուցքաբանություն	1
Մանկաբուժություն	3
Արյունաբանություն /հեմատոլոգիա/	1
Աղետամորսաբանություն /գաստրոէնտերոլոգիա/	1
ԸՆԴԱՄԵՆԸ	18

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը.

Նախագիծն ընդունվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Արցախի Հանրապետությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ներկայացրել են առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի կրթական ծրագրերով իրենց հայտերը՝ հաշվի առնելով առողջապահական համակարգի և ՀՀ զինված ուժերում ներկայիս և ակնկալվող կադրային պահանջարկը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Արցախի Հանրապետությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ առողջապահության նախարարությունից և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից ստացված հայտերի հիման վրա ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ըստ մասնագիտությունների ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ հատկացված կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով ուսումնառության անվճար տեղերի հատկացում, բժշկական կադրային ներուժի պատրաստում, ՀՀ զինված ուժերում առկա բժիշկ-սպանների և մարզային առողջապահության կադրային պահանջարկի համալրում:

Նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել բարձրագույն ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը և կարգավորել իրավական դաշտը տվյալ բնագավառում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Արցախի Հանրապետություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ:

6. Ակնկալվող արդյունքը.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախատեսում է 2018/2019 ուսումնական տարվա համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի կրթական ծրագրերով ուսումնառությունը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել կլինիկական օրդինատուրայի համար 95 տեղ, որից 17-ը՝ Արցախի Հանրապետությանը, 18-ը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին, 49-ը՝ ՀՀ առողջապահության նախարարությանը, 11-ը՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը և 28 տեղ ինտերնատուրայի համար:

Տեղեկանք

<<2018/2019 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ ինտերնատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ընդունելության տեղերը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

<<2018/2019 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ ինտերնատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ընդունելության տեղերը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<2018/2019 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ ինտերնատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին>>

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>ՀՀ Ֆինանսների նախարարություն</p> <p>Հունիսի 21-ի թիվ 01/9-2/11227-18 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>Հուլիսի 10-ի թիվ ՊՆ/510-1011 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>Հունիսի 25-ի թիվ ԱԹ/05/8015-18 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>Հուլիսի 4-ի թիվ 01/19.2/59453-18 Գրություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 3-րդ կետում անհրաժեշտ է «հրապարակման օրվան» բառերը փոխարինել «հրապարակմանը» բառով:</p>	<p>Առաջարկությունը ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p>
<p>Հանրային քննարկում</p>	<p>Էմմա Մաղաքյան- Առաջարկում եմ ավելացնել ուռուցքաբանության օրդինատուրայի անվճար տեղ(եր): ՀՀում այսօր շատ կարևոր ոլորտներից է օնկոլոգիայի ոլորտը և լավագույն ուսանողները պետք է հնարավորություն ունենան սովորել այդ բաժնում անվճար հիմունքներով: Հուսամ՝ առաջարկս կբավարարվի, հաշվի</p>	<p>Առաջարկությունը ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p>

	<p>առնելով ուռուցքային հիվանդությունների հսկա թիվը մեր երկրում:</p> <p>Բյուրակն Իշխանյան- Առաջարկում են կլինիկական օրդինատուրան ընդհանրապես անվճար դարձնել և աշխատավարձ վճարել կլինիկական օրդինատորներին, ինչպես դա կատարվում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, քանի որ կլինիկական օրդինատորներն ըստ էության կատարում են բժշկի աշխատանք իրենց օրդինատուրայի ողջ ընթացքում, որից շահում են բուժհաստատությունները:</p> <p>Հասկանալի է, որ անվճար դարձնելու դեպքում անհնար կլինի բոլոր շրջանավարտներին տեղավորել իրենց ցանկացած մասնագիտացման կլինիկական օրդինատուրայում, բայց տվյալ դեպքում կարելի է վարվել այնպես, ինչպես աշխարհի շատ երկրներ են անում: Այսինքն, որևէ մասնագիտացման գծով կլինիկական օրդինատորների տեղերը հատկացնում է ոչ թե նախարարությունը, այլ տվյալ բուժհաստատությունը՝ ելնելով իր սեփական կարիքներից ու ֆինանսական վիճակից: Այսպիսով, մարզային բուժհաստատությունները նույնպես կարող են տեղեր հատկացնել՝ բացը լրացնելու նպատակով:</p> <p>Ինչ խոսք, այս դեպքում նույնպես ոչ բոլոր շրջանավարտները կկարողանան մասնագիտանալ իրենց նախընտրած բնագավառում, բայց տվյալ դեպքում նորից կարելի է կիրառել այլ պետությունների փորձը, այն է՝ եթե որևէ մեկը ցանկանում է այնպիսի մասնագիտություն ձեռք բերել, որի պահանջարկը չկա այդ պահին (օրինակ՝ մանկաբարձություն-գինեկոլոգիա), ապա կարող են ընդգրկվել սպասման ցուցակներում (waiting list) և սպասել այնքան տարի, մինչև տվյալ մասնագիտության կլինիկական օրդինատուրայի տեղ կազատվի որևէ բուժհաստատությունում:</p> <p>Վարդան Համբարձումյան-</p> <p>ա) առողջապահության և բժշկության ոլորտի 443 ուսանողներ եւ մասնագետներ ՀՀ Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանին և ՀՀ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին ուղղված բաց նամակում պահանջել են մշակել մեխանիզմներ՝ ամբողջությամբ վերացնելու կլինիկական օրդինատուրայի ուսման վարձը և կլինիկական օրդինատորների կատարած աշխատանքի համար սամանել աշխատավարձ: Բաց նամակի ամբողջական տեքստը այստեղ՝ https://docs.google.com/forms/d/1Ugn_5c6X40GIZePQetTXoU7bHZHFANhC07AHGX5rS4/edit</p> <p>Բաց նամակին միացած մասնագետների ցանկը այստեղ՝ https://drive.google.com/file/d/1fysfsAt2chpAY1F3rNxDJgzfO5OuUhxvf/view?usp=sharing</p> <p>բ) Հայաստանի սոցիալական պայմաններին համապատասխան անհամարժեք վարձեր են սահմանվել բժշկական կրթության համար՝ վեց տարի 900,000 դրամ ուսման վարձ վճարել բժիշկ դառնալու համար, իսկ հետո էլ 2-3 տարի 750,000 կամ 1,050,000 մասնագիտանալու համար:</p> <p>գ) զարգացած երկրներում կլինիկական մասնագիտացում անցնող բժիշկները համարվում են լիարժեք աշխատողներ եւ կատարած աշխատանքի համար ստանում են համընդհանուր կերպով սահմանված աշխատավարձ:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p> <p>Ընդունվել է ի գիտություն:</p> <p>Ընդունվել է ի գիտություն:</p> <p>Ընդունվել է ի գիտություն:</p>	<p>Ներկայացված առաջարկությունը կքննարկվի բժշկական կրթության ոլորտում իրականացվող կրթական բարեփոխումների շրջանակներում:</p> <p>Ներկայացված առաջարկությունը կքննարկվի բժշկական կրթության ոլորտում իրականացվող կրթական բարեփոխումների շրջանակներում:</p>
--	---	---	---

	<p>Օրդինատորների մասնագիտացումը կառավարում է ոչ թե ԿԳՆում նստած չինովնիկը, կամ բժշկական համալսարանը, այլ՝ հիվանդանոցները՝ ըստ մասնագետների պահանջների: Օրինակ, ԱՄՆում բժշկության դպրոցը իրավասու է միայն բժշակական որակավորում տալու համար, իսկ օրդինատորների կրթությամբ զբաղվում են կիս հիվանդանոցները: Harvard Medical School-ը առաջարկում է MD կամ MD/PhD ասիտիճանի կրթություն: Իսկ վիրաբույժ դառնալու համար շրջանավարտը արդեն պետք է դիմի Massachusetts General Hospital. ԱՄՆում գործում է օրդինատուրա դիմելու կենտրոնացված համակարգը՝ Residency Matching Program, որը հնարավորություն է տալիս տեսանելի դարձնել մագնագետների պահանջարկը եւ առկա տեղերը: Բացի դա, սա հնարավորություն կտա մարզային հիվանդանոցներին լուծել մասնագետների պահանջարկը. եթե որեւէ մասնագետի ավելցուկ կա մայրաքաղաքում, ապա շրջանավարտը կարող է մասնագիտանալ մարզային հիվանդանոցում:</p>		
<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>Հուլիսի 10-ի թիվ ՊՆ/510-1011 գրություն</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարությանը կլինիկական օրդինատուրայի 1 /մեկ/ լրացուցիչ տեղ հատկացնելու համար:</p>	<p>Առաջարկությունը ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p>